ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Աթայան Տաթևիկ Աշոտի

Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը»

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մարգարյան Հ.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մաթևոսյան Կ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու
Դանիելյան Գ.Գ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունիսի 20-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ ՄՈՒՐԱԴՅԱՆ Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Միջնադարյան հայ պատմագրության յուրահատկությունների, զարգացման ուղիների, տարբեր դարաշրջանների համար բնութագրական ժանրերի ուսումնասիրությունը հայագիտության արդիական հիմնախնդիրներից է: Ժամանակակից միջնադարագիտության մեջ առանձնահատուկ կարևորություն է տրվում պատմական երկերի համակողմանի հետազոտությանը, որը ներառում է ինչպես աղբյուրագիտական, այնպես էլ պատմագրական բնույթի հիմնահարցերի համադիր քննություն: Այս առումով միջնադարյան ժամանակագրությունները չափազանց հարուստ նյութ են ընձեռում, որի ուսումնասիրությունը թույլ է տալիս պատասխանել մեր ազգային հոգևոր մշակույթի ինքնատիպության հետ կապված բազմաթիվ խնդիրների: Այսօր առկա աղբյուրագիտական և պատմագրական բնույթի գրականության մեջ գերիշխում են միջնադարյան հեղինակների երկերի հրատարակությունները և բնագրագիտական-տեքստաբանական ուսումնասիրու-թյունները: Հետևաբար արդիականություն է ձեռք բերում որոշ նոր հարցադրումներով հանդես գալու, տեսական հարցերի առաջքաշման ու ընդհանրացումների կատարման խնդիրը:

Հայ միջնադարյան պատմագրության մեջ ժամանակագրությունները, իրենց պատկառելի ժամանակագրական և աշխարհագրական ընդգրկման շնորհիվ, պատմական առաջնակարգ սկզբնաղբյուրներ են և մշտապես են գրավել հետազոտողների ուշադրությունը: Սակայն այդ ժանրի երկերի ավանդական մոտեցմամբ լուսաբանությունը սահմանափակում է հետազոտական խնդիրները զուտ պատմագիտական հարցերի շրջանակով: Մասնավորապես ստվերում են մնում պատմագրության տեսանկյունից բազմաթիվ առանցքային հարցեր: Այդպիսիք են ժամանակագրությունների ժանրային առանձնահատկությունները, ընդհանրությունները և տարբերությունները պատմությունների, ժամանակագրությունների և տարեգրությունների միջև, հեղինակների մտակառուցվածքը, հայացքները, ինքնագիտակցության դրսևորումները, ժամանակագրության ժանրի զարգացման ուղիները, ժամանակագրությունների լեզվի ու ոճի ինքնատիպությունները: Ժամանակագրությունների համակողմանի ուսումնասիրությանը խոշոր նպաստ կարող է բերել Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը»[1], որի հրատապությունը դժվար է անտեսել, եթե նկատի ունենանք միջնադարյան հայ պատմագրության ողջ պատմությունը լիարժեք ներկայացնելու հրամայականը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» աղբյուրագիտական և

---

[1] Հրատատակվել է երիցս՝ Սմբատայ Սպարապետի եղբօր արքայի հայոց պատմութիւն յունաց ի Կոստանդինուպօլիս եւ հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկվա, 1856, Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956:

պատմագրական մանրազնին համադիր քննությունը: Առաջադրվել են հետևյալ խնդիրները.

• Անդրադառնալ Սմբատ Սպարապետի գործունեության կարևոր դրվագներին, ի մի բերել նրա մատենագրական ժառանգությունը, ցույց տալ «Տարեգրքի» աղբյուրագիտական և պատմագրական արժեքը:

• Քննել «Տարեգրքի» հեղինակային պատկանելության հարցը:

• Վերականգնել «Տարեգրքի» ձեռագիր օրինակների պատմությունը, տալ ձեռագրերից յուրաքանչյուրի նկարագրությունը, կազմել ձեռագրերի ճյուղագրությունը, առանձնացնել երկի խմբագրությունները:

• Բացահայտել «Տարեգրքի» անծանոթ մնացած սկզբնաղբյուրները, կարևորել «Տարեգրքի» շարադրման համար հիմք ծառայած երկերը՝ պարզաբանելով նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը Սմբատ Սպարապետի աշխատությունում:

• Վերլուծել սկզբնաղբյուրների քաղագրման եղանակի առանձնահատկությունները «Տարեգրքում»:

• Պարզաբանել Սմբատ Սպարապետի հեղինակային ինքնագիտակցության դրսևորման միջոցներն ու նրբերանգները «Տարեգրքում»:

• Վեր հանել «Տարեգրքի»՝ ժանրային բնույթով պայմանավորված տիպաբանական առանձնահատկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Ատենախոսությունը շարադրված է սկզբնաղբյուրների և թեմային վերաբերող ողջ գրականության ներառմամբ, ձեռագրագիտական ու բնագրագիտական դիտարկումների հիման վրա, փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական և պատմահամեմատական վերլուծության սկզբունքների կիրառմամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսության աղբյուրագիտական և պատմագրական ուղղվածությունը ժամանակագրական շրջանակների բացորոշման խնդիր չի առաջադրում: Միայն նշենք, որ Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» առաջին խմբագրությունն ընդգրկում է X դարի երկրորդ կեսից մինչև XIII դարի վերջ ներառող ժամանակագրական ուղենիշները, իսկ երկրորդ խմբագրությունում դեպքերի շարադրանքն ավարտվում է 1331թ իրադարձությունների նկարագրությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հայագիտության մեջ Սմբատ Սպարապետի գործունեությանն ու մատենագրական ժառանգությանը անդրադարձերը բազմաթիվ են, սակայն «Տարեգիրքը» հանգամանալից և բազմակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել: Ձեռագրացուցակներում նկարագրվել են «Տարեգրքի» գրչագրերը, հպանցիկ նշվել են սկզբնաղբյուրները (բացառություն են կազմում Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» վերաբերյալ դիտարկումները): Բնագրերի հատվածական համադրումները ու քննությունները, ըստ էության ինքնակա նպատակ չեն հետապնդել, դրանք ընդամենը միտված են

եղել հեղինակի հարցի պարզաբանմանը: Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» ինքնուրույն հատվածը հետազոտողների ուշադրությանն է արժանացել գերազանցապես որպես պատմական սկզբնաղբյուր, իսկ առաջին մասը դիտարկվել է որպես պարզունակ քաղագրություն: Ձեռագրերի ծագումնաբանության ճշգրտման, ճյուղագրության կազմման, սկզբնաղբյուրների բացահայտման խնդիրները, ինչպես նաև միջնադարյան պատմիչի աշխատության ինքնատիպության աստիճանի բացորոշումը, նրա հեղինակային ինքնագիտակցության բնութագրական գծերի պարզաբանումը, իր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների բնագրերը համառոտելու, ընդարձակելու, լրացնելու սկզբունքների լուսաբանումը, որոնք առավել քան անհրաժեշտ են ապահովելու համար պատմական երկերի լիարժեք հետազոտությունը, դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից:

Ելնելով վերը նշված խնդիրներից՝ ատենախոսության մեջ կատարվել է «Տարեգրքի» ձեռագիր մատյանների աղբյուրագիտական-բնագրագիտական քննություն. վեր են հանվել նրանցում առկա տարբերությունները՝ հավելումներն ու բացթողումները, վրիպակներն ու անճշտությունները: Առաջին անգամ քննություն է կատարվել «Տարեգրքի» ձեռագրերի պատմությունը վերականգնելու ուղղությամբ, երկի ձեռագրերի միջև բացահայտված կառուցվածքային, թեմատիկ, լեզվաոճական տարբերությունների հիման վրա առանձնացվել են գրչագրերի երկու խումբ՝ Ա և Բ՝ Բ1, Բ2$_{(a)}$ և Բ2$_{(b)}$ ենթախմբերով և կազմվել է «Տարեգրքի» ձեռագրերի ճյուղագրությունը: Պարզաբանվել են պատմիչի ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների շրջանակը, բացառվել՝ նրա կողմից որոշ ենթադրյալ սկզբնաղբյուրիների դիմելու վարկածը: Վերլուծվել են Սմբատ Սպարապետի աշխատաեղանակի, նրա մտակերտվածքի առանձնահատկությունները, «Տարեգրքի» շարադրման նպատակն ու խնդիրները, ինչպես նաև երկի ժանրային և հեղինակային պատկանելության հետ կապված վիճելի հարցերը:

Քննության առնված հարցերի ամբողջությամբ առանձին աշխատություն գիտական հասարակությանն է ներկայացվում առաջին անգամ:

Ատենախոսությունում կատարված դիտարկումներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել ինչպես աղբյուրագիտական և պատմագրական հատուկ դասընթացներում, այնպես էլ դասագրքերում: Բնագրագիտական ճգրտումները կարող են էականորեն նպաստել «Տարեգրքի» գիտաքննական տեքստի կազմմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսությունը շարադրելիս մեր ուշադրության կենտրոնում են գտնվել

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» և նրա շարունակությունը հանդիսացող Գրիգոր Երեցի «Շարահարության» հնագույն ձեռագիրն[2] ու լավագույն հրատարակությունը[3]: Նրանց նշանակությունը հատկապես մեծ է ատենախոսության մեջ ներկայացվող բնագրագիտական դիտարկումների իրականացման տեսանկյունից: Մատթեոս Ուռհայեցու և Գրիգոր Երեցի երկերի նշանակությունը դժվար է գերագնահատել հատկապես «Տարեգրքի» սկզբնաղբյուրիների, նրանց հետ աշխատելու Սմբատ Սպարապետի եղանակների, սկզբունքների ու մոտեցումների, ինչպես նաև հեղինակի աշխարհայացքի ինքնատիպության, աշխատությունում նրա հետապնդած նպատակի ու խնդիրների բացահայտման և ներկայացման առումով:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» սկզբնաղբյուրների հարցը պարզաբանելիս որոշակի դեր են կատարել նաև Սամուել Անեցու «Ժամանակագրության»[4], Ներսես Շնորհալու «Վիպասանության» և «Ողբ Եդեսիոյ» երկերի[5], Միքայել Ասորու «Ժամանակագրության»[6] և Վիլհելմ Տյուրացու (Գիյոմ Տյուրոսցի) «Պատմության»[7] տեքստաբանական քննությունները:

«Տարեգրքի» ձեռագրագիտական ուսումնասիրությունը դյուրացնում են Մաշտոցի անվան Մատենադարանի[8], ինչպես նաև հայկական ձեռագրական այլ կենտրոնների ձեռագրացուցակները[9]: Ատենախոսությունում քննարկված

---

[2] Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռագիր թիվ 887:

[3] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

[4] Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Երևան, 2009: Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, Ադամից մինչև 1176 թ. , աշխատասիրությամբ Կ. Մաթեւոսյանի, Երեւան, 2014:

[5] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, քննական բնագիրը պատրաստեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց՝ Մ. Մկրտչյան, Երևան, 1981: Ներսէս Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, քննական բնագիր, բանասիրական դիտողություններ, ծանոթագրություններ Մ. Մկրտչյանի, Երևան, 1973:

[6] Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոց Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870: Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, Երուսաղէմ, 1871: Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche, 1166-1199. Éditée pour la première fois et traduite en français par J. B. Chabot, t. III, Paris, 1905.

[7] Guillaume de Tyr et ses continuateurs, t. II, Paris, 1880.

[8] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, հ. Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Ա. Մալխասեան, խմբագրութեամբ՝ Ա. Տէր-Ստեփանեանի, Երեւան, 2007: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2012:

[9] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. II, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1967: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ.

տարաբնույթ հարցերի ուսումնասիրմանը նպաստում են նաև Վ. Հակոբյանի կազմած «Մանր ժամանակագրություններ» ժողովածուները և հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակությունները[10]:

Ընդգրկած հարցերի բազմազանության առումով մասնագիտական գրականության մեջ առանձնանում է Ժ. Դեդեյանի՝ «Տարեգրքի» ֆրանսերեն թարգմանության առաջաբան-ուսումնասիրությունը[11]: Ժ. Դեդեյանը ներկայացրել է «Տարեգրքի» հնագույն ձեռագրի (Վենետիկ, թիվ 1308) նկարագրությունը, նրա հիշատակարանները, հավանական սկզբնաղբյուրների շրջանակն ու ընդգծել Կիլիկյան Հայաստանի պատմության շարադրման տեսանկյունից երկի կարևոր սկզբնաղբյուր լինելը: Հետազոտողն անդրադարձել է նաև երկի վենետիկյան և մոսկովյան-փարիզյան հրատարակությունների տեքստերի տարբերություններին, վերջիններս մասամբ համադրել է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» և Գրիգոր Երեցի «Շարահարության» հետ՝ կատարելով ուշագրավ դիտարկումներ: Ժ. Դեդեյանը նշել է տեքստերի միջև առկա որոշակի տարբերությունները, ինչպես նաև Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» և Գրիգոր Երեցի «Շարահարության» նյութի «Տարեգրքի» խմբագրություններում ոչ համահավասար արձանագրված լինելու իրողությունը: Ուստի նա եզրակացրել է, որ երկի Մոսկվայի ու Փարիզի հրատարակությունների համար հիմք հանդիսացող ձեռագրերը մյուս՝ վենետիկյան հրատարակության ձեռագրի պարզ համառոտումը չեն, այլ միանգամայն ինքնուրույն աշխատություն: Ժ. Դեդեյանը, անդրադառնալով նաև Սմբատ Սպարապետի դիվանագիտական, ռազմաքաղաքական գործունեությանն ու մատենագրական ժառանգության՝ և հատկապես «Տարեգրքի» լեզվաոճական առանահատությունների քննությանը, ոչ հօգուտ Սմբատ Սպարապետի է լուծել երկի նաև վենետիկյան ձեռագրի հեղինակի հարցը:

«Տարեգրքի» աղբյուրիների և հեղինակային պատկանելության հարցերի ուսումանասիրման առումով ուշադրության է արժանի Ս. Տեր-Ներսիսյան

Զ, յօրինեց՝ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է, յօրինեց՝ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996: Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895: Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Ա, կազմեց Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964: Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Բ, կազմեցին Ն. Ակինեան, Հ. Ոսկեան, Վիեննա, 1971: A Catalogue of the Armenian Manuscripts in the Brithish Museum, by Frederik Cornwellis Convbeare, London, 1913. Manuscrits armeniens de la Bibliotheque nationale de France, R. Kevorkian, A. Ter-Stepanian, Paris, 1998.

[10] Մանր ժամանակագրություններ (XIII-VIIIդդ.), հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984:

[11] La chronique attribuée au Connétable Smbat. Introduction, traduction et notes par Gérard Dédéyan, Paris, 1980.

աշխատանքը[12]: Հեղինակը քննելով «Տարեգրքի» հրատարակությունների տարբերությունները՝ իրավացիորեն գալիս է այն եզրահանգման, որ «Տարեգիրքը» պատկանում է Սմբատ Սպարապետի գրչին, որի տեքստը ներկայացված է վենետիկյան հրատարակությունում, իսկ մյուս խմբագրությունը՝ վերջինիս հակիրճ տարբերակն է՝ հետագա լրացումներով:

«Տարեգրքի» հեղինակի խնդիրը հատուկ հոդվածի նյութ է դարձրել Լ. Բաբայանը[13]: Թեև ուսումնասիրողը միայն մասնակի է համադրում «Տարեգրքի» հրատարակությունները, այնուամենայնիվ կասկածի տակ է առնում Սմբատ Սպարապետի՝ «Տարեգրքի» հեղինակը լինելու տեսակետը: Հետազոտողը կարևոր դիտարկում է կատարել երկի խմբագրություններից մեկում (Բ) առկա Սմբատ Սպարապետի անունից գրված նշումների հնագույն ձեռագրում ներկայացված չլինելու մասին:

Սմբատ Սպարապետի գործունեությանն ու մատենագրական վաստակին հակիրճ անդրադարձ են կատարել նաև հայ պատմագրությանը և գրականությանը նվիրված աշխատությունների հեղինակները:

Առավել հանգամանորեն Սմբատ Սպարապետի հայացքները վերլուծության է ենթարկել Լ. Բաբայանը, որը նաև գնահատել է «Տարեգիրքը» որպես պատմական սկզբնաղբյուր: Նրա համոզմամբ՝ XIII դարի պատմությունը շարադրելիս, «Անկախ նրանից, թե ով է Տարեգիրքը գրել… այն ականատեսի, գործող անձի ստուգապատում աղբյուր է»[14]:

Ղ. Ալիշանը լուսաբանել է Սմբատ Սպարապետի կյանքի և գործունեության առանձին դրվագները, քննել Գունդստաբլի մատենագրական ժառանգության և հատկապես «Տարեգրքի» հետ կապված առանձին հարցեր[15]: Առանձին ուշադրության են արժանի «Տարեգրքի» աղբյուրագիտական և բնագրագիտական հետազոտությանն առնչվող դիտարկումները: Հեղինակը նշում է, որ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» և «Տարեգրքի» տարածքային ընդգրկումները չեն տարբերվում: Սմբատ Սպարապետը հետևում է Մատթեոս Ուռհայեցուն՝ «անոր պէս իր երկրին սահմաններէն շատ հեռու չարձրկելով իր սուր աչքերը»[16]: Նա հակիրճ, բայց և դիպուկ շեշտում է միջնադարյան երկու հեղինակների երկերի լեզվաոճական ուրույնությունը, ինչպես նաև Սմբատի գործի՝ պատմիչների կողմից չհիշվելու հավանական պատճառները: Անդրադառնում է նաև երկի շարադրման հնարավոր հանգամանքների ու հետագա ճակատագրի հարցերին: Մեծանուն հայագետը բարձր է գնահատում նաև «Տարեգրքի»

---

[12] Sirarpie Der-Nersessian, The Armenian Chronicle of the Constable Smbat or of the "Royal Historian", Dumbarton Oaks Papers, XIII, 1959.

[13] Լ. Բաբայան, Սմբատ Սպարապետը և «Տարեգրքի» հեղինակի հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 243-254:

[14] Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XIII դարեր), Երևան, 1981, էջ 282:

[15] Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 110-113:

[16] Նույն տեղում, էջ 111:

հաղորդած տեղեկությունները հատկապես Լևոն Մեծագործ, Հեթում Ա և Լևոն Գ արքաների գործունեության ներկայացման տեսանկյունից:

Միջնադարյան այլ հեղինակների շարքում Սմբատ Սպարապետի պատմագրական ժառանգությանն է անդրադարձել նաև Մ. Աբեղյանը:[17] Նա «Տարեգրքի» առաջին հատվածը համառոտ, իսկ երբեմն նաև բառացի քաղված է համարում Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունից»: Մ. Աբեղյանը արձանագրում է նաև երկի ինքնուրույն հատվածի և շարունակության ժամանակագրական մոտավոր սահմանները, ինչպես նաև՝ հպանցիկ անդրադառնում «Տարեգրքի» վերջին հատվածում ընդգրկված հաղորդումների կառուցվածքին՝ այն համարելով «տարեցտարի նշանակված հիշատակարանի բնույթ»[18] ունեցող շարադրանք: Մ. Աբեղյանը բարձր է գնահատել «Տարեգրքի» հաղորդած տեղեկությունների ժամանակագրական ճշգրտությունը:

Այսպիսով, վերոնշյալ սկզբնաղբյուրներն ու աշխատությունները հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» աղբյուրագիտական և պատմագրական վերլուծելության հետ կապված բավականաչափ թվով հարցերի վերաբերյալ: Ատենախոսությունը շարադրելիս մեր նպատակն է եղել զգալիորեն ընդլայնել ավանդաբար քննարկվող հարցերի շրջանակը, համալիր ուսումնասիրության նյութ դարձնել նոր խնդիրներ, կատարել նաև տեսական հարցադրումներ և այդպիսով մասնագետների դատին հանձնել համապարփակ հետազոտություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ **ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏՆ ՈՒ ՆՐԱ «ՏԱՐԵԳԻՐՔԸ»**, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Սմբատ Սպարապետի կյանքն ու մատենագրական ժառանգությունը»,** ներկայացված են Սմբատ Սպարապետի կյանքի և գործունեության հիմնական դրվագները՝ հիմնվելով միջնադարյան սկզբնաղբյուրների, ինչպես նաև՝ «Տարեգրքի» հաղորդած տեղեկությունների վրա: Անդրադարձ է կատարվել Սմբատ Սպարապետի մատենագրական հարուստ ժառանգությանը, որը դիտարկվել է թե՛ միջնադարյան հայ իրավունքի ուսումնասիրման, և թե՛ Կիլիկիայի հայկական թագավորության պատմության լուսաբանման տեսանկյունից: Վեր են հանվել նաև «Տարեգրքի»՝ ինչպես XIII

---

[17] Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 247-250:

[18] Նույն տեղում, էջ 249:

դարի Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականության՝ խաչակրաց իշխանությունների, Իկոնիայի սելջուկյան սուլթանության, Եգիպտոսի մամլուքների, մոնղոլների հետ փոխհարաբերությունների պատմության, այնպես էլ ներքին կյանքի վերաբերյալ եզակի և արժեքավոր մի շարք տեղեկություններ:

***Երկրորդ ենթագլխում՝* «Սմբատ Սպարապետը և «Տարեգրքի» հեղինակային պատկանելության հարցը»,** քննվել են «Տարեգրքի» հեղինակի խնդրին վերաբերող վիճահարույց հարցերը: Ներկայացվել են ուսումնասիրողներից Լ. Բաբայանի, Ժ. Դեդեյանի՝ Սմբատ Սպարապետի հեղինակային իրավունքները մերժող՝ երկում Հեթումյան արքայատոհմի ներկայացուցիչների վերաբերյալ հաղորդումներում հեղինակի անտարբեր վերաբերմունքի, ռազմական գործողությունները մանրամասն չներկայացնելու, Սմբատ Սպարապետի՝ որպես զորավարի անտեսված լինելու, «Տարեգրքի» և Սմբատ Սպարապետի գրչին պատկանող մյուս ստեղծագործությունների լեզվաոճական տարբերությունների և այլնի վերաբերյալ դիտարկումները: «Տարեգրքի» համապատասխան հատվածների վերլուծությամբ ներկայացվել են ծանրակշիռ փաստարկեր և ժխտվել են ուսումնասիրողների նշված եզրահանգումներ:

***Երկրորդ գլուխը՝* «ՏԱՐԵԳՐՔԻ» ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ: ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՔՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ»,** ընդգծված ձեռագրագիտական-բնագրագիտական բնույթ ունի: Այն կազմված է երեք ենթագլխից:

***Առաջին ենթագլխում՝* «Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» ձեռագրերը»,** քննվել են «Տարեգրքի» ձեռագրերի առանձնահատկությունները, տրվել են դրանց աղբյուրագիտական նկարագրությունները, նշվել են վրիպակներն ու բացթողումները, վեր է հանվել գրչագրերի պատմությունը:

«Տարեգրքի» տասնհինգ ձեռագիր օրինակից չորսը՝ թիվ 4584, թիվ 1900, թիվ 10871, թիվ 4337, գտնվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, չորսը՝ թիվ 1308, թիվ 1149, թիվ 1261, թիվ 542 (պատառիկ)՝ Մխիթարյան միաբանության Վենետիկի Մատենադարանում, մեկը՝ թիվ 40, գտնվում է՝ ՌԴ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղ, մեկը՝ թիվ 104, Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում, մեկը՝ թիվ 469, Զմմառի վանքի գրադարանում, երկուսը ՝ թիվ 521, Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի գրադարանում, մեկը՝ թիվ 5458, Լոնդոնում՝ բրիտանական թանգարանում և ևս մեկը՝ թիվ 229, Ֆրանսիայի Ազգային գրադարանում: Ըստ դարերի՝ «Տարեգրքի» ընդօրինակությունների դասդասման պատկերը այսպիսին է. ԺԳ-ԺԴ դ.՝ 1, ԺԴ-ԺԵ դ.՝ 1, ԺԶ դ.՝ 2, ԺԹ դ.՝ 11 օրինակ: Տարբեր ընդօրինակություններում բուն «Տարեգրքի» կամ շարունակության ավարտի թվականները հետևյալ պատկերն ունեն. 1272թ. ավարտվող օրինակների թիվը՝ 1, 1327 թ.՝ 1 (պատառիկ), 1331թ.՝ 13:

***Երկրորդ ենթագլխում՝* «Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» խմբագրությունները»,** «Տարեգրքի» ձեռագրերում առկա կառուցվածքային,

թեմատիկ և լեզվաոճական տարբերությունների հիման վրա երկի գրչագրերը բաժանել ենք երկու՝ Ա (Վենետիկ, թիվ 1308) և Բ (Լոնդոն, թիվ 5458, Երևան, թիվ 4548, Վենետիկ, թիվ 542, Երևան, թիվ 1900, Երևան, թիվ 10871, Սանկտ Պետերբուրգ, թիվ 40, Վենետիկ, թիվ 1261, Վենետիկ, թիվ 1149, Երևան, թիվ 4337, Փարիզ, թիվ 229, Երուսաղեմ, թիվ 521 (պարունակում է երկու օրինակ), Զմմառ, թիվ 469, Վիեննա, թիվ 104, իսկ Բ խումբը՝ Բ1, Բ2$_{(a)}$ և Բ2$_{(b)}$ ենթախմբերի: Քննվել են Բ խմբագրության ստեղծման հանգամանքները և կազմվել՝ ձեռագրերի ճյուղագրությունը:

Երրորդ ենթագլխում՝ **«Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» հրատարակություններն ու թարգմանությունները»,** ներկայացված են «Տարեգրքի» հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն հրատարակությունների և թարգմանությունների համառոտ նկարագիրն ու դրանց գիտական արժեքավորումը: Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» առաջին հրատարակությունը կատարել է Ոսկան Հովհաննիսյանցը 1856 թ. Մոսկվայում[19]՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 4584 ձեռագրի կամ նրանից հանված օրինակներից մեկի հիման վրա: «Տարեգրքի» երկրորդ հրատարակությունը իրականացրել է Կարապետ վարդապետ Շահնազարյանցը 1859 թ. Փարիզում[20]: Հրատարակությունը հիմնված է երկի երեք ձեռագրերի և Մոսկվայի հրատարակության համեմատության վրա: «Տարեգիրքը» երրորդ անգամ լույս է ընծայել Սերովբե Ագլյանը 1956 թ. Վենետիկում[21]: Հրատարակության հիմքում ընկած է Վենետիկի Մխիթարյան գրադարանի թիվ 1308 ձեռագիրը:

«Տարեգրքի» ռուսերեն թարգմանությունը իրականացրել է Ա. Գալստյանը 1974 թ. [22]: Այն կատարվել է երկի վենետիկյան հրատարակության հիման վրա և բնագրագիտության տեսանկյունից ոչ մի նորույթ չի պարունակում: Նկատենք, որ մինչ այս հրատարակությունը կատարվել էին երկի միայն հատվածական ռուսերեն թարգմանություններ[23], ուստի նրա ամենամեծ արժեքը թերևս այն է, որ այս հրատարակության միջոցով «Տարեգրքի» առաջին ամբողջական թարգմանությունը հասանելի դարձավ ռուսալեզու ընթերցողին: Երկի ֆրանսերեն թարգմանության համար պարտական ենք Ժ. Դեդեյանին[24]: «Տարեգրքի» այս

---

[19] Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի հայոց պատմութիւն յունաց ի Կոստանդնուպօլիս եւ հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց:

[20] Տարեգիրք Սմբատայ Սպարապետի:

[21] Սմբատայ Սպարապետի Տարեգիրք:

[22] Смбат Спарапет, Летопись.

[23] История монголов по армянским источникам, заключающий в себе извлечения из трудов Вардана, Стефана Орбелиана и Конетабля Сембата, перевод и объяснения К. П. Патканова, выпуск I, С.-Петербург, 1873. Армянские источники о монголах, извлечения из рукописей XIII-XIV вв., перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Москва, 1962.

[24] La chronique attribuée au Connétable Smbat. Introduction.

թարգմանությունը կատարվել է երկի վենետիկյան հրատարակության հիման վրա և ներկայացնում է վերջինիս միայն 179-254 էջերի թարգմանությունը (վերաբերում է 1159-1272/1273 թթ.): Չնայած նրանում առկա անճշտություններին, այն հաջողված թարգմանությունն է: Հրատարակությունը իրենից ներկայացնում է նաև բնագրի նախնական ուսումնասիրման ու մեկնաբանման փորձ: «Տարեգրքի» այս հրատարակությունից բացի իրականացվել են նաև երկի հատվածական ֆրանսերեն թարգմանություններ՝ հիմնված Մոսկվայի և Փարիզի հրատարակությունների վրա՝ 1862 թ. Վիկտոր Լանգլուայի (ներառում է 1091-1331 թթ.)[25] և 1869 թ. Էդուարդ Դյուլորիեի (ընդգրկում է 1098-1331 թթ.)[26] կողմից: «Տարեգրքի» անգլերեն ամողջական թարգմանությունը, երկի վենետիկյան հրատարակության հիման վրա, հրատարակվել է Ռ. Բեդրոսյանի ջանքերով 2005 թ.[27]:

Երրորդ գլուխը՝ **«ՏԱՐԵԳՐՔԻ» ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՇԱՐԱԴՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**», նաև պատմագրական հարցեր է արծարծում:

Առաջին ենթագլխում՝ «Սմբատ Սպարապետն ու նրա նախորդ ժամանակագիրները», քննվել է «Տարեգրքի» սկզբնաղբյուրների շրջանակը, հեղինակի կողմից վերջիններից օգտվելու աստիճանն ու չափը: Բացահայտվել է Ներսես Շնորհալու «Վիպասանութիւն» և «Ողբ Եդեսիոյ» երկերի՝ «Տարեգրքի» սկզբնաղբյուրներ հանդիսանալու իրողությունը, ինչպես նաև՝ հերքվել Սամուել Անեցու «Ժամանակագրության»՝ «Տարեգրքի» սկզբնաղբյուրների թվին պատկանելու կարծիքը:

Երկրորդ ենթագլխում՝ Քաղագրական եղանակի առանձնահատկությունները Սմբատ Սպարապետի «Տարեգրքում», «Տարեգրքի» և նրա անմիջական սկզբաղբյուրների՝ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» և Գրիգոր Երեցի «Շարահարության» մանրազնին համեմատության միջոցով վերլուծվել են Սմբատ Սպարապետի՝ սկզբնաղբյուրների քաղագրման առանձնահատկությունները: Այս երկերի համադրումը ցույց է տալիս, որ հեղինակը սկզբնաղբյուրների հաղորդումները փոխանցելիս սկզբունքային մոտեցումներ է որդեգրել: Սմբատ Սպարապետը հապավում կամ ամփոփ ձևով է քաղագրում, մասնավորապես, նրանցում ներկայացվող սուրբգրային մեջբերումները, երկնային երևութների, աստվածային նախախնամության մասին պատմող մանրամասնությունները, ինչպես նաև իր

---

[25] Mémoires de l'Académie impériale des sciences de St.-Petersbourg, VII^{R} serie, t. IV, N^{0} 6. Extrait de la Chronique de Sempad, seigneur de Babaron, connétable d'Arménie, suivi de celle de son continuateur, comprenant l'histoire des temps écoulés depuis l'établissement des Roupéniens en Cilicie, jusqu'à l'extinction de cette dynastie. Traduit pour la premiére fois de l'arménien, sur les éditions de Moscouet de Paris, par Victor Langlois, St.-Petersbourg, 1862, pp. 1-38.

[26] Recueil des historiens des Croisades, publie par les soins de l'Académie des inscriptions et belles-lettres. Documents arméniens, t. I, Paris, imprimerie impériale, 1869, pp. 610-672.

[27] Smbat Sparapet's Chronicle, translated from classical Armenian by Robert Bedrosian, Long Branch, New Jersey, 2005.

նախորդների կրոնա-բարոյական բնույթի հաղորդումները, հերոսների ծավալուն ճառերը և այլն: Մյուս կողմից՝ ի հակադրություն նշված դրվագների հապավմանը՝ Սմբատ Սպարապետը ձգտել է հետևողական լինել աղբյուրների քաղաքական պատմությանը վերաբերող հաղորդումները փոխանցելիս, որն էլ ի հայտ է բերում հեղինակի հետաքրքրությունը առաջինի և դրա բացակայությունը՝ երկրորդի նկատմամբ: Ուրեմն՝ մի կողմից հապավված հատվածների, իսկ մյուս կողմից՝ բառացի փոխանցումների ու հավելումների բնույթը, ստիպում է մտածել, որ կատարված փոփոխությունները ավելի շատ նպատակադիր աշխատանքի արդյունք են, քան՝ միայն բնագրի կրճատման ցանկություն: Ավելին, մինչ երկի շարադրմանն անցնելը Սմբատ Սպարապետը հստակ պատկերացում է ունեցել աշխատության բովանդակային ընդգրկման մասին:

Չորրորդ գլուխը՝ «ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԵՐԿՈՒՄ ԵՎ «ՏԱՐԵԳՐՔԻ» ԺԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ Հեղինակային ինքնագիտակցության հիմնախնդիրը Սմբատ Սպարապետի «Տարեգրքում», քննության են առնվել այն հարցերը, թե ի՞նչ նպատակ է հետապնդել հեղինակը, ինչպե՞ս է վերաբերվել իր աշխատությանը, գիտակցել է արդյո՞ք իր տեղն ու դերը նախորդ պատմիչների և անցյալի նշանավոր դեմքերի շարքում, թե՝ ոչ: Այս հարցերի համատեքստում քննվել են «Տարեգրքում» առաջին դեմքով եզակի և հոգնակի թվով արտահայտված հեղինակային նշումների, ստեղծագործության կառուցվածքային և ոճաբանական ինքնատիպությունների, նրանում սկզբնաղբյուրիների հիշատակման, ինչպես նաև հեղինակի աշխարհայացքային պատկերացումների, քաղաքական և գաղափարական հակվածության դրսևորումները:

Երկրորդ ենթագլխում՝ «Տարեգրքի» ժանրային պատկանելությունը», վերլուծվել են «Տարեգրքի» ժանրային առանձնահատկությունները՝ վեր հանելով երկի ժամանակագրությունների ժանրին պատկանելու իրողությունը: Մասնավորապես՝ բնութագրվել են «Տարեգրքի» շարադրանքի՝ ժանրով պայմանավորված ժամանակագրական և ոճական լուծումները, հեղինակային գնահատման համակարգի սկզբունքները, ինչպես նաև զուգահեռներ տարվել միջնադարյան պատմական աշխատությունների ստեղծման ժանրային այլ օրենքների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ի մի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները:

1. Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» թե՛ իր բովանդակած նյութի, թե՛ ժամանակագրությունների ժանրի և առհասարակ միջնադարյան հեղինակի մտածողության ներքին զարգացումները ուսումնասիրելու առումով հայ միջնադարյան մատենագրության կարևորագույն երկերից է, որը, սակայն, տևական ժամանակ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից:

2. «Տարեգրքի» քննությունը և համեմատությունը միջնադարյան մյուս աղբյուրների հետ թույլ է տալիս վեր հանել երկի՝ XIII դարի Կիլիկիայի

հայկական թագավորության արտաքին քաղաքականության և ներքին կյանքի պատմության վերաբերյալ մի շարք արժեքավոր և եզակի տեղեկություններ: «Տարեգրքի» բովանդակության քննության արդյունքում, հերքվում են Սմբատ Սպարապետի հեղինակային իրավունքները կասկածի տակ առնող հիմնական դիտողությունները, վեր հանվում՝ երկի հեղինակի աշխարհիկ անձնավորություն և Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական վերնախավի ներկայացուցիչ լինելու իրողությունը:

3. «Տարեգրքի» բովանդակության քննության արդյունքում, հերքվում են Սմբատ Սպարապետի հեղինակային իրավունքները կասկածի տակ առնող հիմնական դիտողությունները, վեր հանվում՝ երկի հեղինակի աշխարհիկ անձնավորություն և Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական վերնախավի ներկայացուցիչ լինելու իրողությունը:

4. «Տարեգրքի» ձեռագրերի ծագումնաբանության խնդիրների քննության արդյունքում հնարավոր է եղել որոշ կողմերով վերականգնել երկի գրչագրերի պատմությունը: Ժամանակային և տարածական առումներով որոշակիացվել են հատկապես «Տարեգրքի» հնագույն՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարանում գտնվող թիվ 1308 ձեռագրի պատմության՝ «Կիլիկյան Հայաստան», «Վան», «Հիզան» և «Կոստանդնուպոլիս» փուլերը:

5. «Տարեգրքի» մեկ այլ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 4337 ձեռագրի քննությամբ հնարավոր է եղել պարզել, որ այն չի ստեղծվել տարբեր վայրերում, զանազան տարեթվերին ընդօրինակված աշխատությունների միակցման կամ վերակազմման միջոցով, ինչպես ներկայացվում է ձեռագրի նկարագրությունը պարունակող ձեռագրացուցակում: «Տարեգրքի» տեքստը պարունակող այս ժողովածուն ստեղծվել է որպես մեկ ամբողջական ձեռագիր և հաջորդաբար արտագրվել է հինգ գրիչների կողմից, որոնցից առաջին գրիչը ընդօրինակել է 1-40բ թերթերը, երկրորդ՝ 43ա-119բ, երրորդը՝ 122ա-216բ թերթերը, ապա շարունակել է կրկին երկրորդ գրիչը՝ գրելով 223ա-253բ թերթերը, չորրորդ և հինգերորդ գրիչները ավարտին ենհասցրել ձեռագիրը(258ա-263ա և 265ա-270ա թերթեր) :

6. Սմբատ Սպարապետի «Տարեգրքի»՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և ձեռագրական այլ կենտրոններում պահվող տասնհինգ գրչագրերի բնագրագիտական քննության արդյունքում բացորոշվել են խմբագրական բնույթի մի շարք կառուցվածքային, թեմատիկ և լեզվաոճական տարբերություններ, որոնց հիման վրա երկի ձեռագրերը բաժանել ենք խմբերի և ենթախմբերի ու կազմել՝ ձեռագրերի ճյուղագրությունը:

7. «Տարեգրքի» երկու խմբերի ձեռագրերում տեղ գտած տարբերությունների վերլուծությունը, ինչպես նաև՝ դրանց համադրումը «Տարեգրքի» սկզբնաղբյուր Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» հետ, թույլ է տվել պարզել, որ երկի Ա և Բ խմբերը չեն ծագում մեկը մյուսից և ընդհանուր սկզբնագրին հանգում են որպես ինքնուրույն խմբագրություններ: Իր հերթին՝ «Տարեգրքի» ձեռագրերի Բ խմբին հատուկ շարունակությունը, որը գրվել

է Լևոն Ե արքայի (1320-1342) օրոք ապրած անհայտ հեղինակի կողմից, ոճի և բովանդակության տեսանկյունից փոխհամաձայնեցված է թվում երկի բուն տեքստում տեղ գտած խմբագրական փոփոխությունների հետ, ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ «Տարեգրքի» ձեռագրերի Բ խմբի սկզբնագիրը ստեղծվել է նրա շարունակողի կողմից:

8. Միջնադարյան հայ մատենագրության մի շարք երկերի հետ «Տարեգրքի» համապատասխան հատվածների համադիր քննության արդյունքում բացահայտվել են Ներսես Շնորհալու «Վիպասանութիւն» և «Ողբ Եդեսիոյ» երկերի «Տարեգրքի» սկզբնաղբյուրներ հանդիսանալու իրողությունը: Համեմատական քննությունը փաստում է նաև Սամուել Անեցու «Ժամանակագրության» «Տարեգրքի» աղբյուր հանդիսանալու կարծիքի անհիմն լինելը:

9. Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» վերլուծության հիման վրա կատարվել են նաև կարևոր եզրահանգումներ հեղինակի քաղաքական եղանակի վերաբերյալ: Երկի քննությունը ցույց է տալիս, որ Սմբատ Սպարապետը, քաղաքելով իր սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, հավատարիմ է մնում իր նախորդներին բովանդակության, սակայն՝ ոչ ոճի առումով: Հեղինակը հետևողական չէ նաև կերպարների բնութագրումները փոխանցելու հարցում: Մի կողմից՝ նա ցուցաբերում է ակնհայտ չեզոքություն և զսպվածություն՝ օտար պատմական դեմքերի պարագայում, թեև մյուս կողմից, սիրելի հերոսների ներկայացման դեպքում նրա մոտեցումը միանգամայն այլ է: Այդպիսի դեպքերում նա ձգտել է իդեալականացնել հայոց պատմության մեջ կարևոր դեր կատարած տիրակալներին:

10. «Տարեգրքի» և նրա սկզբնաղբյուրների բնագրագիտական համեմատությունը փաստում է, որ երկի առաջին հատվածը մեխանիկական քաղաքություն չէ, ինչպես ընդունված է համարել: Սմբատ Սպարապետը նպատակադիր վերամշակման է ենթարկել քաղաքված նյութը՝ այն համապատասխանեցնելով իր հետապնդած նպատակին և խնդիրներին: Նկատենք, որ Սմբատ Սպարապետը մինչև «Տարեգրքի» շարադրմանն անցնելը հստակ պատկերացում է ունեցել նաև գրվելիք աշխատության թեմատիկ ընդգրկման մասին:

11. «Տարեգրքի» ուսումնասիրումը թույլ է տալիս եզրակացնել, որ Սմբատ Սպարապետը ինքնատիպ հեղինակային գիտակցությամբ օժտված պատմիչ է: Նա թեև նախընտրում է ներկայանալ հեղինակային «անանունության» ներքո և չի ձգտում ինքնադրսևորման, սակայն իրեն լիովին գիտակցում է որպես «Տարեգրքի» հեղինակ: Այդ մասին են վկայում Սմբատ Սպարապետի և՛ փոքրաթիվ, բայց անձնավորված նշումները, և՛ նրա դիրքորոշումները երկի բովանդակության, նրանում առկա գնահատականների, կառուցվածքի և ոճի ընտրության հարցերում:

12. Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», ի հակադրություն ձեռագրական ավանդույթից զուրկ իր խորագրի, միանշանակ դասվում է

ժամանակագրությունների ժանրի ստեղծագործությունների շարքին: Նման եզրահանգման համար հիմք է տալիս «Տարեգրքի» բովանդակության, կառուցվածքի և ոճի առանձնահատկությունների քննությունը: «Տարեգրքի» վերլուծությունը, վեր հանելով ժամանակագրությունների ժանրին բնորոշ ինքնատիպությունները, բացորոշում է երկի ժանրային պատկանելության խնդիրը: Ավելին, ինչպես ցույց է տալիս «Տարեգրքի» հորինվածքի, քաղաքական և գաղափարական ուղղվածության քննությունը, այն հանդիսանում է XIII դարի Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը ավանդող պաշտոնական ժամանակագրություն:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Քաղաքական եղանակի առանձնահատկությունները Սմբատ Սպարապետի «Տարեգրքում», Պատմություն և մշակույթ, Երևան, 2014, էջ 279-292:
2. Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» ձեռագրերը, Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երեւան, 2015, 1-12, էջ 53-88:
3. Սմբատ Սպարապետի կյանքն ու մատենագրական ժառանգությունը, Պատմություն և մշակույթ, Երևան, 2015, էջ 321-328:
4. Սմբատ սպարապետի «Տարեգրքի» սկզբնաղբիւրների մասին, Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երեւան, 2016, 1-12, էջ 57-82:
5. Սմբատ Սպարապետը եւ «Տարեգրքի» հեղինակային պատկանելիության հարցը, «Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթությունը» միջազգային գիտաժողովի նյութեր, Երեւան, 2016, էջ 3-7:
6. Հեղինակային ինքնագիտակցության խնդիրը Սմբատ Սպարապետի «Տարեգրքում», Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երեւան, 1-12, 2017, էջ 39-60:

АТАЯН ТАТЕВИК АШОТОВНА

«ХРОНИКА» СМБАТА СПАРАПЕТА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение».

Защита состоится 20-го июня, 2017 г. в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной академии наук РА (0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено источниковедческому изучению одного из самого важного и достоверного источника Киликийского армянского царства XIII века «Хроники» Смбата Спарапета.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованных источников и литературы. Во введении обоснованы важность и актуальность исследования, научная новизна работы. Далее указаны цели и задачи, поставленные перед автором, проанализированы использованные источники и литература.

В первой главе - «Смбат Спарапет и его «Хроника»», изложены основные эпизоды жизни и деятельности Смбата Спарапета. Эти данные сопоставлены со сведениями из средневековых источников, а также из самой «Хроники». Выявлены ряд редких и ценных сведений «Хроники» касающихся внешней и внутренней истории Киликийского армянского царства XIII века. В этой же главе истолкованы спорные вопросы авторской проблемы «Хроники».

Во второй главе - «Рукописная традиция «Хроники». Вопросы редакции и текстологии» исследованы сохранившиеся рукописи «Хроники», выявлены их структурные особенности, ошибки и упущения. На основе текстологического анализа рукописей «Хроники», списки разделены на группы А и Б, и подгруппы Б1, $Б2_{(a)}$ и $Б2_{(b)}$. В конце главы приводится краткое

описание публикаций «Хроники» на армянском, русском, французском и английском языках и их научное значение.

В третьей главе – «Источники «Хроники» и принципы изложения» истолкованы и выявлены основные и ранее неизвестные нам источники «Хроники». В этой же главе истолкованы особенности компилятивного метода автора.

В четвертой главе – Авторское самосознания в труде Смбата Спарапета и жанровый характер «Хроники», рассмотрены следующие вопросы: какова цель автора, его отношение к своему труду, осознание своего места и роли среди других авторов и т. д. Выявлены авторские заметки в первом лице единственного и множественного числа, структурно-стилистические особенности, упоминание о первоисточниках, а также проявление идеологических и политических убеждений автора.

В этой же главе выявлены жанровые особенности, в частности, проанализированы хронологические и стилистические решения «Хроники» обусловленные жанром хроник. А также проводится сравнительный анализ труда Смбата Спарапета с другими жанрами средневековой письменности.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводи исследования.

ATAYAN TATEVIK A.

THE «CHRONICLE» OF SMBAT SPARAPET

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of «Historiography, Source Study» 07.00.05.

The defense of the dissertation will be held on June 20, 2017, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The given investigation is devoted to the sourceological analysis of one of the most important and reliable sources of the XIII century Cilician Kingdom of Armenia - to Smbat Sparapet's (Military Leader's) "Chronicle".

The thesis consists of an introduction, four chapters, conclusions and list of used sources and literature. The importance and relevance of the research, its scientific novelty, the goals and tasks set by the author argued in the introduction, an analyze of used sources and literature is done.

In the first chapter - "Smbat Sparapet and His "Chronicle" presents the main episodes of Smbat Sparapet's life and work. Those facts are jointly presented with the medieval sources as well as the information provided by the "Chronicle". Also, unique and valuable information is revealed from the "Chronicle" referring to the history of the external and internal policy of the Cilcian Kingdom of Armenia.

In the second chapter - "The Manuscriptic Tradition of the "Chronicle". The Main Issues of its Editions and Textology"- studies the peculiar features of the "Chronicle" giving their sourceological description, the misprints and omissions; it also reveals the history of the manuscripts. On the basis of textological analysis, the manuscripts of the "Chronicle" were divided into two groups- A and B; group B of manuscripts, in its turn, was divided into the subgroups B1, B2 $_{(a)}$ և B2 $_{(b)}$. The end of this chapter presents the short description and the scientific

value of the Armenian, Russian, English, French publications and the translations of the "Chronicle".

In the third chapter - "The Primary Sources and the Principles of Statement of the "Chronicle"- studies the frames of the sources of the "Chronicle" and the degree of their usage by the author. Some primary sources of the "Chronicle" unknown in the past are also revealed. This chapter also analyzes the peculiar features of the compiling method of sources by Smbat Sparapet.

In the fourth chapter - "The Manifestation of the Self-Consciousness of the Author in Smbat Sparapet's Work and the Genre Nature of the "Chronicle"- examines the following issues; a) What was the aim of the author.?, b) What his attitude towards his Work?, c) Did he realize his place and role among the previous narrators and the most outstanding figures of the past or not? Within the context of these issues the chapter also studies the matters of author notes in the first person singular or plural, the structural and stylistic peculiarities of the work, the mentioning of primary sources in it, as well as the manifestations of the world-view notions, political and ideological inclination of the author. This chapter also analyzes the genre peculiarities of the "Chronicle" by establishing the fact that the work belongs to the genre of the chronologies. In particular, the chapter analyzes the chronological and stylistic solutions (conditioned by the genre) of the text in the "Chronicle", the principles of the author assessment, at the same time parallels are drawn with other genre rules of the creation of medieval historical works.

The main findings and results of the study are summarized in the conclusion.